

ՃԾԲ.

ՄԻԽԱՐԵԱՆ տիտղոսն է որ հետևեալ վաւերագրին մէջ ամենէն աւելի պիտի հետաքրքրէ մեր ընթերցողները, և մենք հարկ է որ քիչ մ'աւելի լուսարաններ, քանի որ այս առաջին անգամ է որ անիկա յիշուիլ կը սկսի մեր հրատարակութեանց շարքին մէջ:

Ուշագրան այն է՝ որ Մեծ Սերաստացի Բարունապետի մահէն տարի մը վերջ, 1750-ին, կը սկսին անոր որդիք իրենց զիրենց առաջին անգամ ՄԻԽԱՐԵԱՆ անուանել, մինչդեռ անկէ առաջ լոկ կը ստորագրէին «ի կարգէ Սրբոյն Անտոնի Արքայի»:

Շատ արդար էր այդ զգացումը, նկատելով որ անոնք հաւասարապէս կ'ապրէին իրենց Եր. Հօր նշխարաց մօտիկը, որոնք կը հանգչէին նոյն ինքն Մխիթարակերտ Մենաստանին մէջ, որուն ժառանգներն իրենք էին:

Մեր փոքր հետազօտութեան մէջ երեք դիտելի կէտեր ունինք: Մխիթարեան կը կոչէ ինքզինքը ա. Մխիթարայ Առաջին Յաջորդը Գեղյ. Ստեփաննոս Մեղզոնեան Արքահայր. ր. Մխիթարեան կ'անուանէ նա իր միանձունքն ալ. գ. Մխիթարեան կ'անուանուին անոնք ուրիշներէ ևս:

Զետեղենք հոս կարգ մը օրինակներ՝ մի միայն 1750 և 1751 տարիներու շրջանէն.

1. Անտոն եղբորորդի Մեղզոնեան Արքահօր՝ յամին 1750 Հոկտ. 4 թուակիրով կը գրէ թուղթ մը հետևեալ խորագրով. «Գերապատուելի և սրբազանի Հոգևորի «հօրդ իմոյ Տեառն Տեառն Հայր Ստեփաննոս Մխիթարեան Արքայ հայր կոչեցեալ...»: Նամակիս ընթացքին կը կրկնէ դարձեալ նոյն տիտղոսը:

2. Հ. Կարապետ Մարտիրոսեան, 1750 Յուլիս 4 թուակիր նամակին տակ կը ստորագրէ Մխիթարեան:

3. Հ. Մկրտիչ, 1750 Նոյեմբեր 20-ի նամակին տակ, գոր կ'ուղղէ իր Արքահամ եղբոր, կը ստորագրէ Մխիթարեան:

4. Նոյնը, 1751 Յունիս 3-ին, կը ստորագրէ նոյնպէս Մխիթարեան:

5. Հ. Ներսէս վարդապետ կարնեցի կը գրէ նամակ մը 1751 Յունիս 6-ին՝ այս խորագրով. «Մեծապատիւ տեառն տեառն Հայր Զաքարիայ վարդապետիդ, և «մեծի միսօճարիդ Կոստանդնուպօլսոյ, Ներսէս յետնեալս ամենայնի, մեղսաքաւիչ «քահանայ, միայնակեաց մխիթարեան ի տէր խնդալ»: Նամակին տակ ևս Հ. Ներսէս կը ստորագրէ ինքզինք Մխիթարեան:

6. Յակօբ և Գասպար Ընաստեան անունով երկու անձերու ստորագրութեամբ Կ. Պոլսէն 1751-ին թուղթ մը կը հասնի այս խորագրով. «Գերյարգոյ և բարու «նապետ ընդհանրական Արքայ Հայկազեան միաբանից Մխիթարեանց և քաջ ըն- «տանի համասնունդ Ստեփաննոս տիեզերածաւալ վարդապետիդ»:

7. Հ. Գէորգ Անթապցի, 1751 Հոկտ. 23-ին կը գրէ թուղթ առ Մեղզոնեան, ստորագրելով ինքզինքը Մխիթարեան:

8. Հ. Զաքարիա վարդապետ Ակնեցի, 1751 Դեկտ. 3-ի թուղթին տակ կը ստորագրէ նոյնպէս Մխիթարեան:

9. Հ. Գէորգ 1751 Դեկտ. 8-ին թուղթ մը կ'ուղղէ «Գերապատիւ և գերա- «մեծար տեառն տեառն Ստեփաննոս Մխիթարեան Արքայի», և ինքն ալ կը ստորագրէ ինքզինքը Մխիթարեան:

10. Հ. Զաքարիա 1751 Դեկտ. 20-ի թուղթի մը տակ նոյնպէս կը ստորագրէ Մխիթարեան: